

27.01.2025թ.

**Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատի
կողմից թիվ ՎԴ/6701/05/22 վարչական գործով
27.01.2025 թվականին կայացված որոշման վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 27.01.2025 թվականին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ներկայացրած վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.04.2024 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Վազգեն Աբրահամյանի ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի 14.10.2022 թվականի թիվ 438 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է. վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.04.2024 թվականի որոշումը և այն փոփոխել. Վազգեն Աբրահամյանի հայցն ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 14.10.2022 թվականի թիվ 438 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Ռուզաննա Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Սույն գործը հարուցվել է Վազգեն Աբրահամյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Կոմիտեի 14.10.2022 թվականի թիվ 438 որոշումը:

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 29.03.2023 թվականի վճռով բավարարել է Վազգեն Աբրահամյանի հայցը՝ անվավեր ճանաչելով Կոմիտեի 14.10.2022 թվականի թիվ 438 որոշումը:

Վերաքննիչ դատարանը 01.04.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժել է՝ Դատարանի 29.03.2023 թվականի վճիռը թողնելով անփոփոխ:

Վճռաբեկ դատարանը որոշել է՝ Կոմիտեի վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել Վերաքննիչ դատարանի 01.04.2024 թվականի որոշումը և այն փոփոխել. Վազգեն Աբրահամյանի հայցն ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի 14.10.2022 թվականի թիվ 438 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

I. Նախևառաջ հարկ եմ համարում հատուկ ընդգծել, որ թեև Վճռաբեկ դատարանը սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների

հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 257-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ և 124-րդ հոդվածների խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը (*տե՛ս, Վճռաբեկ դատարանի որոշման 3-րդ էջ, 4-րդ բաժին*), այդուհանդերձ իրավական հարցադրումը, որին անդրադարձել է Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ, վերաբերելի չէ նշված դատավարական նորմերին, իսկ հիմնական իրավական վերլուծություններն առնչվում են մաքսային հսկողության ինստիտուտին, ԵԱՏՄ-ում միասնական մաքսային կարգավորումներին, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասին, 257-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, 322-րդ հոդվածին, 329-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ մասերին, ՀՀ կառավարության՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուդային համակարգի կիրառման կարգի մասին» թիվ 1927-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուդային համակարգի կիրառման կարգի (այսուհետ՝ Կարգ) 3-րդ, 13-16-րդ կետերին, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189-րդ հոդվածի 1-ին մասին և 201-րդ հոդվածին:

Իմ համոզմամբ Վճռաբեկ դատարանը, ըստ էության, շեղվել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու իր իսկ որոշմամբ արձանագրված հիմքից և դատավարական նորմերին անդրադառնալու, դրանք վերլուծելու, մեկնաբանելու և այդ դիրքորոշումները սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելու ու Վերաքննիչ դատարանի կողմից ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 257-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ և 124-րդ հոդվածների խախտում թույլ տալու հանգամանքը հիմնավորելու փոխարեն անդրադարձել է մի հարցադրման, որն ամբողջովին վերաբերում է Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայի բովանդակությանը, որը Վերաքննիչ դատարանի կողմից խախտված լինելու, ըստ այդմ նաև՝ դրան անդրադառնալու անհրաժեշտության մասին չի խոսել նույնիսկ բողոքաբերը, ինչն ակնհայտ երևում է Վճռաբեկ դատարանի որոշման 2-րդ բաժնից, որում նկարագրված են վճռաբեկ բողոքով ներկայացված փաստարկները:

Իմ այս դիրքորոշման հիմնավոր լինելը երևում է հենց Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական բաժնում նշված հարցադրման ձևակերպումից, որից պարզ է դառնում, որ այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք Օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված արարքի զանցակազմն առկա է այն դեպքում, երբ մաքսային սահմանով անձը «կանաչ ուղի» մուտքի (ելքի) գիծը հատելու ժամանակ հայտարարագրման ենթակա գույքը մաքսային սահմանով տեղափոխում է այն թաքցնելու այնպիսի մեթոդների կիրառմամբ, որ մաքսային մարմնի պաշտոնատար անձը չի կարող այն հայտնաբերել սովորական տեսողական զննման միջոցով՝ առանց մաքսային անձնական զննման կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների օգտագործման, վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության իրականացման համատեքստում: Վճռաբեկ դատարանը վերոգրյալ

հարցադրման ձևակերպմամբ փաստացի փորձել է ապահովել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքի, այն է՝ Վերաքննիչ դատարանին վերագրվող նյութական և դատավարական նորմերի ենթադրյալ խախտման և իրավական հարցադրման բովանդակային կողմի՝ Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայի վերլուծության միջև կապը: Նշվածն ավելի ակնառու է դառնում որոշման 9-րդ էջի նախավերջին պարբերության ձևակերպումից: Այսպես.

Վճռաբեկ դատարանի որոշման 4-րդ բաժնում նշված հարցադրման ձևակերպումից պարզ է դառնում, որ Օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված արարքի զանցակազմի առկայության կոնկրետ դեպքին Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության իրականացման համատեքստում:

Այնուհետև, ինչպես վերը նշվեց, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է մաքսային հսկողության ինստիտուտին, ԵԱՏՄ-ում միասնական մաքսային կարգավորումներին և դրանց վերաբերելի իրավական ակտերին, իսկ ապացույցների գնահատման արդյունքում գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննությանը Վճռաբեկ դատարանն արդեն անդրադարձել է դրանց համատեքստում (տե՛ս, որոշման 9-րդ էջ):

Այսպիսով, գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքին ուղղակի առնչություն չունեցող իրավական հարցի վերաբերյալ, ըստ էության, լրացնելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքը և փաստացի հիմնական վերլուծությունը կատարելով Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայի վերաբերյալ՝ եզրահանգելով, որ «կանաչ ուղի» մուտքի (ելքի) գիծը հատելու պարագայում մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքները թաքցնելու միջոցով մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելու զանցակազմի օբյեկտիվ կողմն արտահայտվում է, երբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումն իրականացվում է ապրանքները թաքցնելու այնպիսի մեթոդների կիրառմամբ, որ մաքսային մարմնի պաշտոնատար անձը չի կարող դրանք հայտնաբերել սովորական տեսողական զննման միջոցով՝ առանց մաքսային անձնական զննման՝ որպես մաքսային հսկողության բացառիկ ձևի, կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների օգտագործման, և հանցագործության հատկանիշները բացակայում են:

Ավելին, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանը պայմանավորել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 257-րդ հոդվածի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի խախտում թույլ տալու հանգամանքով, սակայն որոշմամբ այդպես էլ չի հիմնավորել, թե ինչ կերպ է Վերաքննիչ դատարանը խախտել այդ նորմերը:

II. Վկայակոչելով Օրենսգրքի 189-րդ և 201-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) *անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար նույն օրենսգրքով նախատեսված է*

պատասխանատվություն, համարվում է մաքսային կանոնների խախտում, որոնց դիտարկողյալ խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Այդպիսի իրավախախտում է համարվում մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը, որն իրականացվում է գաղտնարաններ օգտագործելով, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով, և եթե բացակայում են հանցագործության հատկանիշները: Այսինքն՝ մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման իրավախախտումն առկա է այն պարագայում, երբ անձը ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս գաղտնարաններ օգտագործելու, ապրանքներին այլ տեսք տալու կամ ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով փորձում է թաքցնել հայտարարագրման ենթակա ապրանքներ:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների՝ Օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված զանցակազմով սահմանված գաղտնի տեղափոխման եղանակներին արձանագրում է, որ գաղտնարանների օգտագործմամբ վերոնշյալ իրավախախտումը կարող է դրսևորվել այն պարագայում, երբ անձը թաքցնում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող անօրինական կամ հայտարարագրման ենթակա ապրանքն իրը թաքցնելու համար հատուկ արտադրված վայրերում (որոնց գործառնական նպատակը միայն ապրանքների ապօրինի տեղափոխումն է մաքսային սահմանով) կամ հատուկ սարքավորված կամ հարմարեցված վայրերում (այսինքն՝ տվյալ վայրը (իրը), որտեղ թաքցվում է անօրինական կամ հայտարարագրման ենթակա ապրանքը, ենթարկվել է դիզայնի փոփոխությունների, կամ այլ փոփոխությունների) (օրինակ՝ ապրանքները մեքենայի դիզայնով չնախատեսված խորշում, կրկնակի ճամպուրակի մեջ, հագուստի երեսպատման տակ գտնվող խոռոչներում տեղափոխելը և այլն)» (տե՛ս, Վճռաբեկ դատարանի որոշման 8-րդ էջ):

Ամբողջությամբ համակարծիք են Վճռաբեկ դատարանի այն իրավական դիրքորոշման հետ, որ մաքսային իրավախախտում է համարվում մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը, որն իրականացվում է **գաղտնարաններ օգտագործելով, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով, և եթե բացակայում են հանցագործության հատկանիշները** և որ մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման իրավախախտումն առկա է այն պարագայում, երբ անձը ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս **գաղտնարաններ օգտագործելու, ապրանքներին այլ տեսք տալու կամ ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով փորձում է թաքցնել հայտարարագրման ենթակա ապրանքներ:**

Համակարծիք են նաև Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշման հետ, որ գաղտնարանների օգտագործմամբ մաքսային իրավախախտումը կարող է դրսևորվել այն պարագայում, երբ անձը թաքցնում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող անօրինական կամ հայտարարագրման ենթակա ապրանքն իրը թաքցնելու համար հատուկ արտադրված վայրերում (որոնց գործառնական նպատակը միայն ապրանքների ապօրինի տեղափոխումն է մաքսային սահմանով) կամ հատուկ սարքավորված կամ հարմարեցված վայրերում (այսինքն՝ տվյալ վայրը (իրը), որտեղ թաքցվում է

անօրինական կամ հայտարարագրման ենթակա ապրանքը, ենթարկվել է դիզայնի փոփոխությունների, կամ այլ փոփոխությունների) (օրինակ՝ ապրանքները մեքենայի դիզայնով չնախատեսված խորշում, կրկնակի ճամպուրակի մեջ, հագուստի երեսպատման տակ գտնվող խոռոչներում տեղափոխելը և այլն):

Գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները համապատասխանում են Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայի նկարագրությանը:

Մինչույն ժամանակ իմ անհամաձայնությունն եմ հայտնում Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայի նկարագրության հետ աղերս չունեցող և նշված իրավանորմի կարգավորումներին բացարձակապես չհամապատասխանող, վերոգրյալ մեկնաբանություններին տրամաբանորեն հակասող Վճռաբեկ դատարանի ներքոնշյալ իրավական դիրքորոշման և սույն գործի փաստերի նկատմամբ դրա կիրառման կապակցությամբ, քանի որ իմ համոզմամբ Վճռաբեկ դատարանը փաստացի լրացրել է Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիան՝ դրանում ավելացնելով արարքն իրավախախտում որակելու այնպիսի պայմաններ, որպիսիք օրենսդրի կողմից չեն սահմանվել: Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանը կատարել է օրենսդրի լիազորություն՝ խախտելով իշխանությունների տարանջատման սահմանադրական հիմնարար սկզբունքը, ինչին կանդրադառնամ ստորև:

Օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և **որի համար նույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:**

Օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը՝ **մաքսային հսկողությունից թաքցնելով**, այսինքն՝ **գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով** կամ **ապրանքներին այլ տեսք տալու միջոցով՝** հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների մաքսային արժեքի չափով:

Վերոգրյալ իրավանորմը մեկնաբանելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, գտնում եմ, որ նշված իրավանորմի դիսպոզիցիայում նկարագրված արարքը, որի համար պատասխանատվություն է նախատեսված նույն իրավանորմի սանկցիայի շրջանակներում, համարվում է մաքսային իրավախախտում բացառապես այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքները տեղափոխվում են **մաքսային հսկողությունից թաքցնելով:**

Ընդ որում, իրավական ակտի որոշակիությունն ապահովելու, ըստ այդմ նաև՝ դրա տարրնթերցումն ու տարամեկնաբանումը բացառելու նպատակով օրենսդիրը բացահայտել է **«մաքսային հսկողությունից թաքցնելով»** եզրույթի բովանդակությունը,

նույն իրավանորմում պարզաբանելով, որ նշված արարքը դրսևորվում է հետևյալ երեք եղանակներից առնվազն որևէ մեկով՝

- գաղտնարանների օգտագործմամբ,
- ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով,
- ապրանքներին այլ տեսք տալու միջոցով,

եթե բացակայում են հանցագործության հատկանիշները:

Գտնում են, որ մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելիս թեև չի կարող ընտրվել «կանաչ ուղի» մուտքի (ելքի) գիծը և բոլոր այն դեպքերում, երբ ֆիզիկական անձը հատում է «կանաչ ուղի» մուտքի գիծը, գործում է այն կանխավարկածը, որ վերջինիս մոտ բացակայում են մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքներ, այդուհանդերձ նշված արարքի համար անձը չի կարող զանցառու ճանաչվել Օրենսգրքի 201-րդ հոդվածով և նրա նկատմամբ չի կարող կիրառվել նույն հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվություն, քանի դեռ հաստատված չլինի այն հանգամանքը, որ ապրանքը տեղափոխվել է **մաքսային հսկողությունից թաքցնելով**: Այլ կերպ ասած՝ անձը չի կարող զանցառու ճանաչվել Օրենսգրքի 201-րդ հոդվածով և նրա նկատմամբ չի կարող կիրառվել նույն հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվություն, եթե չհաստատվի, որ մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխվել են **գաղտնարանների օգտագործմամբ կամ ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով** և բացակայում են հանցագործության հատկանիշները:

Իմ գնահատմամբ, եթե անձն անգամ, ունենալով հայտարարագրման ենթակա ապրանք, հատել է «կանաչ ուղի» մուտքի գիծը, որն ինքնին հավասարազոր է մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին վերջինիս կողմից արված հայտարարության, միևնույնն է նա չի կարող զանցառու ճանաչվել Օրենսգրքի 201-րդ հոդվածով և նրա նկատմամբ չի կարող կիրառվել նույն հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվություն, քանի որ «կանաչ ուղի» մուտքի գիծը հատելու միջոցով հայտարարագրման ենթակա ապրանքի տեղափոխումը, որպես իրավախախտում, Օրենսգրքի 201-րդ հոդվածով նկարագրված չէ: Այլ կերպ ասած՝ «կանաչ ուղի» մուտքի գիծը հատելու միջոցով հայտարարագրման ենթակա ապրանքի տեղափոխումն ինքնին անօրինական վարքագիծ է, սակայն այն Օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված զանցանք չէ, քանի որ նշված իրավանորմում ամրագրված իրավակարգավորման համաձայն՝ արարքը կարող է զանցանք որակվել միայն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքները տեղափոխվում են **մաքսային հսկողությունից թաքցնելով**, այսինքն՝ **գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով**՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում:

Գտնում են, որ եթե օրենսդրի կամքը լիներ վարչական պատասխանատվություն սահմանել նաև «կանաչ ուղի» մուտքի գիծը հատելու միջոցով հայտարարագրման ենթակա ապրանքի տեղափոխման համար, ապա այդ պարագայում Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայում, որպես մաքսային իրավախախտում, կնկարագրվեր «կանաչ ուղի» մուտքի

գիծը հատելու միջոցով հայտարարագրման ենթակա ապրանք տեղափոխելը, նույնիսկ եթե այդ ապրանքի տեղափոխումն իրականացվում է բացահայտ, առանց թաքցնելու, որի դեպքում այդ արարքն ինքնին կհամարվեր զանցանք:

Ի վերջո, Վճռաբեկ դատարանի կողմից Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիային նոր բովանդակություն տալը գուցե ինչ-որ կերպ հասկանալի լիներ, եթե վճռաբեկ բողոք բերած անձը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրած լիներ Օրենսգրքի 201-րդ հոդվածի կապակցությամբ իրավունքի զարգացման խնդրի առկայության հարց և հենց դրանով պայմանավորվեր սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը: Մինչդեռ, ինչպես վերն արդեն նշել եմ, տվյալ դեպքում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանը պայմանավորել է դատական սխալի, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 257-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ և 124-րդ հոդվածների խախտում թույլ տալու հանգամանքով, որպիսի պարագայում Վճռաբեկ դատարանի որոշումը կարող էր և պետք է վերաբերեր այդ խախտումները Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տված լինելուն և դրա հիմնավորմանը, այլ ոչ թե՝ Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայի այնպիսի մեկնաբանությանը, որը չի բխում դրա բովանդակությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ հայցվոր Վազգեն Աբրահամյանը 14.08.2022 թվականին՝ ժամը 03:30-ի սահմաններում Ստամբուլ-Երևան PC 550 չվերթով ժամանել է Հայաստանի Հանրապետություն: Վազգեն Աբրահամյանը հատել է «կանաչ ուղին», որից հետո վերջինս ՄԴՊՎ Զվարթնոց բաժնի աշխատակիցների կողմից ուղեկցվել է «կարմիր ուղի»՝ մաքսային զննման:

Կոմիտեի Մաքսանենգության դեմ պայքարի վարչության կողմից 14.08.2022 թվականին ժամը 04:30-ին կազմվել է «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» թիվ ՄՅԽԴ-373 արձանագրությունը, որի համաձայն՝ 14.08.2022 թվականին՝ ժամը 03:30-ի սահմաններում, Ստամբուլ-Երևան PC 550 չվերթով ՀՀ էր ժամանել քաղաքացի Վազգեն Աբրահամյանը, մոտեցել էր մաքսային զննման գոտի, հատել էր «կանաչ ուղին», որից հետո վերջինս ՄԴՊՎ Զվարթնոց բաժնի աշխատակիցների կողմից ուղեկցվել էր «կարմիր ուղի»՝ մաքսային զննման, որի արդյունքում նրա գոտկատեղից կախված հայտնաբերվել են մեկ թևնոց և երկու վզնոցներ՝ միացված իրար, և գրպանից դեղին մետաղական շղթաներ, ընդհանուր՝ 210 գրամ քաշով: Նշված ապրանքը վերցվել և կապարակնքվել են RA370044 մաքսային ապահովման համարակալված միջոցով: «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրության մեջ Վազգեն Աբրահամյանը գրառում է կատարել այն մասին, որ իր մոտ եղել են անձնական նպատակներով ձեռք բերված իրեր, և նպատակ չի ունեցել իրացնել, այդ իսկ պատճառով կարծել է, որ դրանք ենթակա չեն հայտարարագրման, չի կիրառել թաքստոցներ, անձամբ է մատնացույց արել դրանց գտնվելու վայրի մասին: Միաժամանակ նշել է, որ այդ պատճառով առարկում է և հրաժարվում է ստորագրել **(հատոր 1-ին, գ.թ. 12-13, 56):**

Կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության 14.08.2022 թվականի «Անձնական մաքսային զննման» թիվ 164 ակտով արձանագրվել է, որ դեղին մետաղյա շղթաները՝ 1 թևնոցը և 2 վզնոցները միացված են իրար և կապված քաղաքացու գոտկատեղին, իսկ մնացածը գտնվում են Վազգեն Աբրահամյանի տաբատի գրպանում:

Չննման ենթարկվող անձը՝ Աբրահամյան Վազգենը կամավոր հանձնել է իր գոտկատեղից կապված դեղին մետաղյա շղթան և թափանցիկ տոպրակում գտնվող դեղին մետաղյա շղթաներ, ընդհանուր՝ 210 գրամ զանգվածով (**հատոր 1-ին, գ.թ. 49-52**):

Կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ վարույթների իրականացման բաժնի գլխավոր մաքսային տեսուչի 19.08.2022 թվականի որոշմամբ Վազգեն Աբրահամյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով նշանակվել է նյութագիտական և ապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետին (**հատոր 1-ին, գ. թ. 63**):

ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետի 03.10.2022 թվականի մետաղագիտական և ապրանքագիտական թիվ 14102204 եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված փաթեթում առկա զարդերի մետաղի տեսակը և հարզը նշվել է 583 հարզի ոսկու համաձուլվածք (**հատոր 1-ին, գ.թ. 66-69**):

Կոմիտեի իրավաբանական վարչության պետը, պարզելով, որ 14.08.2022 թվականին Վազգեն Աբրահամյանը, մաքսային հսկողությունից թաքցնելով, այն է՝ գրպանում և գոտկատեղում կախված վիճակում տեղադրելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել է 2.369.626 ՀՀ դրամ մաքսային արժեքով 210 գրամ ընդհանուր քաշով ոսկյա զարդեր, այսինքն՝ վերջինս թույլ է տվել Օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, ինչը հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությամբ, 14.08.2022 թվականի անձնական մաքսային զննման ակտով, թիվ 164՝ անձի մաքսային զննում անցկացնելու մասին որոշմամբ, ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետի 03.10.2022 թվականի թիվ 14102204 եզրակացությամբ և մաքսային հսկողության վարչության 07.10.2022 թվականի գրությամբ, 14.10.2022 թվականին կայացրել է «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 438 որոշումը, որի եզրափակիչ մասում բառացիորեն շարադրվել է հետևյալը. «Վազգեն Աշոփի Աբրահամյանին (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 1-ին թաղ. 39 շենք 40 բն. անձնագիր՝ AU02827526) ճանաչել զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով և նրան տուգանել թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված վերոնշյալ ապրանքների մաքսային արժեքի չափով՝ 2 369 626 ՀՀ դրամի չափով» (**հատոր 1-ին, գ.թ. 16-18**):

Վազգեն Աբրահամյանը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել վիճարկման հայց, որով, ի թիվս այլնի, նաև պնդել է, որ ինքը չի կատարել Օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված խախտումը: Մասնավորապես՝ խնդրո առարկա ապրանքները ՀՀ մաքսային տարածք տեղափոխելիս որևէ կերպ չի դժվարացրել դրանց հայտնաբերումը, չի օգտագործել գաղտնարաններ կամ ՀՀ մաքսային տարածք տեղափոխելիս դրանց այլ տեսք չի տվել: Այսինքն՝ նշված ապրանքները ՀՀ մաքսային տարածք է տեղափոխել առանց մաքսային հսկողությունից թաքցնելու:

Դատարանը 29.03.2023 թվականի վճռով Վազգեն Աբրահամյանի հայցը բավարարելու և Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 14.10.2022 թվականի թիվ 438 որոշումն անվավեր ճանաչելու իր եզրահանգումը պատճառաբանել է նրանով, որ «(...) ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով մաքսային իրավախախտման օբյեկտիվ կողմը դրսևորվում է

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխմամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, այսինքն՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով և միաժամանակ այդ արարքում հանցագործության հատկանիշների բացակայությամբ, իսկ սուբյեկտիվ կողմը՝ միայն դիտարկությամբ, քանի որ խախտումը կապված է անձի ակտիվ գործողությունների հետ, անձը գիտակցում է իր գործողության հակահրավական բնույթը, կանխատեսում է դրա վնասակար հետևանքները ու ցանկանում է այն, կամ գիտակցաբար թույլ է տալիս դրա առաջացումը:

(...)

Դատարանը, հետազոտելով նշված փաստաթղթերը, արձանագրում է, որ դրանցում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Հայցվորը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով մաքսային հսկողությունից թաքցնելով, այն է՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով տեղափոխել է ապրանքներ:

Ավելին, 14.08.2022 թվականի մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությամբ Հայցվորը նշել է, որ իր մոտ եղել է անձնական նպատակներով ձեռք բերված իրեր և նպատակ չի ունեցել իրացնել, այդ իսկ պատճառով կարծել է, որ դրանք ենթակա չեն հայտարարագրման, չի կիրառել թաքսուրոցներ, անձամբ է մատնացույց արել դրանց գտնվելու վայրը: Միաժամանակ նշել է, որ այդ պատճառով առարկում է և հրաժարվում է ստորագրել:

Ինչ վերաբերում է Պատասխանողի կողմից մատնանշված այն հանգամանքին, որ խնդրո առարկա ապրանքները Հայցվորը մաքսային մարմնին է հանձնել միայն այն բանից հետո, երբ արդեն կայացված է եղել անձի մաքսային զննում իրականացնելու մասին որոշում, մաքսային հսկողությունից թաքցված ապրանքները կամավոր հանձնելու առաջարկին ի պատասխան նոր հանձնել է, ինչը երևում է նաև 14.08.2022 թվականի անձնական զննման ակտում, Դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ նշվածն ինքնին չի կարող իրավախախտման փաստը հավաստող ապացույց հանդիսանալ: (...):»:

Վերաքննիչ դատարանը 01.04.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 29.03.2023 թվականի վճիռն անփոփոխ թողնելու իր եզրահանգումը պատճառաբանել է նրանով, որ «(...) վիճարկվող որոշման կայացման համար հիմք են հանդիսացել 14.08.2022 թվականի մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությունը, 14.08.2022 թվականի անձի մաքսային զննում անցկացնելու մասին թիվ 164 որոշումը, ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.10.2022 թվականի թիվ 1410204 եզրակացությունը և մաքսային հսկողության վարչության 07.10.2022 թվականի գրությունը, մինչդեռ, (...) դրանցով որևէ կերպ չի հաստատվում այն, որ հայցվորը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով մաքսային հսկողությունից թաքցնելով, այն է՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով տեղափոխել է ապրանքներ: Հատկանշական է, որ 14.08.2022 թվականի մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությամբ հայցվորը նշել է, որ իր մոտ եղել են անձնական նպատակներով ձեռք բերված իրեր, և նպատակ չի ունեցել իրացնել, այդ իսկ պատճառով կարծել է, որ դրանք ենթակա չեն հայտարարագրման, չի կիրառել թաքսուրոցներ, անձամբ է մատնացույց արել

դրանց գտնվելու վայրը: Միաժամանակ նշել է, որ այդ պատճառով առարկում է և հրաժարվում է ստորագրել: (...):

Գտնում եմ, որ Դատարանը և Վերաքննիչ դատարանը սույն գործով կիրառելի իրավական ակտերի և կոնկրետ իրավանորմերի ճիշտ վերլուծության արդյունքում կայացրել են պատճառաբանված և հիմնավորված, գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր, իսկ Կոմիտեի վճռաբեկ բողոքն իմ գնահատմամբ ակնհայտ անհիմն է և բավարարման ոչ ենթակա՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից հետևում է, որ 14.10.2022 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 438 որոշմամբ Վազգեն Աբրահամյանին վերագրված խախտումը հիմնավորվել է նրանով, որ վերջինս 14.08.2022 թվականին մաքսային հսկողությունից թաքցնելով՝ գրպանում և գոտկատեղում կախված կամ կապված վիճակում տեղադրելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել է 2.369.626 ՀՀ դրամ մաքսային արժեքով 210 գրամ ընդհանուր քաշով ոսկյա զարդեր:

Գտնում եմ, որ նշված հիմնավորումն ընդհանրապես բավարար չէ Վազգեն Աբրահամյանին Օրենսգրքի 201-րդ հոդվածով զանցառու ճանաչելու և նույն հոդվածով սահմանված սանկցիայի շրջանակներում տուգանք նշանակելու համար, քանի որ դրանից չի երևում, թե տեղափոխվող ապրանքն ինչ եղանակով է թաքցվել մաքսային հսկողությունից, որը հայտնաբերելու համար մաքսային մարմինը ստիպված է եղել հաղթահարել լրջագույն «դժվարություններ»: Ավելին, 14.10.2022 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 438 որոշման հիմնավորումներն այնքան անհստակ են, որ հնարավոր չէ միանշանակ հետևություն անել այն մասին, թե ինչ է նկատի ունեցել մաքսային մարմինը «գոտկատեղում կախված վիճակում» արարքը նկարագրելիս: Մասնավորապես, արդյոք շղթան կախված կամ կապված է եղել գոտուց, որի դեպքում այն կարող էր տեսանելի լինել, հագուստի վրայից՝ տալով գոտու տեսք, որի դեպքում ևս այն կարող էր լինել տեսանելի, թե հագուստի տակից:

14.10.2022 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 438 որոշման նկարագրական-պատճառաբանական մասի ուսումնասիրությունից հետևում է, որ տեղափոխվող ապրանքը համարվել է մաքսային հսկողությունից թաքցված այն պատճառով, որ դա գտնվել է գրպանում և գոտկատեղում կախված վիճակում: Կարելի է կարծել, որ գրպանի կամ գոտկատեղից կախելու փոխարեն շղթաները Վազգեն Աբրահամյանի պարանոցից կախված ու տեսանելի լինելու պարագայում վերջինս կողմից «կանաչ ուղի» մուտքի (ելքի) գիծն ընտրելը կլիներ իրավաչափ:

Հարկ եմ համարում հատուկ ընդգծել, որ բնավ արդարացված չէ մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելիս «կանաչ ուղի» մուտքի (ելքի) գիծն ընտրելու Վազգեն Աբրահամյանի վարքագիծը, քանի որ հայտարարագրման ենթակա ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելիս Վազգեն Աբրահամյանը պարտավոր էր հայտնել հայտարարագրման ենթակա ապրանքներ տեղափոխելու մասին և օրենքով սահմանված կարգով հայտարարագրել դրանք:

Այդուհանդերձ, եթե Վազգեն Աբրահամյանը սխալ է ընտրել ուղին և չի կատարել ապրանքները հայտարարագրելու իր պարտականությունը, դա դեռևս բավարար չէ նրան Օրենսգրքի 201-րդ հոդվածով զանցառու ճանաչելու համար:

Գտնում եմ, որ Վազգեն Աբրահամյանին կարող էր վերագրվել Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված արարք միայն այն պարագայում, եթե սույն գործով վիճարկվող վարչական ակտով հաստատված համարվեր, որ մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխվել են **գաղտնարանների օգտագործմամբ կամ ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով:**

Տվյալ դեպքում, ինչպես նկարագրված է Կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության 14.08.2022 թվականի «Անձնական մաքսային զննման» թիվ 164 ակտով, դեղին մետաղյա շղթաները՝ 1 թևնոցը և 2 վզնոցները միացված են եղել իրար և կապված են եղել քաղաքացու գոտկատեղին, իսկ մնացածը գտնվել են Վազգեն Աբրահամյանի տաբատի գրպանում:

Գտնում եմ, որ տաբատի գրպանը որևէ կերպ հնարավոր չէ համարել գաղտնարան, եթե դրանում երկտակ կտորով կամ այլ հատուկ միջոցներով առանձին հատված չի ձևավորվել, կամ այնպիսի վայր, որ որտեղ գտնվող իրը դժվար է հայտնաբերել: Ընդ որում, տաբատում դրված ապրանքի հայտնաբերումը, հաշվի առնելով ներկայիս տեխնիկական հնարավորությունները, որևէ դժվարություն չի ներկայացնում: Ավելին, Վազգեն Աբրահամյանն առանց դժվարություններ ստեղծելու, կամավոր հանձնել է իր տաբատի գրպանում եղած տոպրակը: Ինչ վերաբերում է քաղաքացու գոտկատեղին, ապա «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» 14.08.2022 թվականի թիվ ՄՅԽԴ-373 արձանագրության և «Վարչական տույժ նշանակելու մասին» 14.10.2022 թվականի թիվ 438 որոշման մեջ հայցվորին վերագրվող արարքը նկարագրվել է «գոտկատեղից կախված» արտահայտության կիրառմամբ, որը բոլորովին հստակ չէ, ինչին վերևում արդեն իսկ անդրադարձել եմ, այդուհանդերձ դժվար է պատկերացնել, թե ինչպիսի «դժվարություն» է հաղթահարել մաքսային մարմինը գոտկատեղից կախված իրը հայտնաբերելու համար և արդյոք այն հայտնաբերելու համար բավարար չի եղել հայցվորին առաջարկել ցույց տալ գրպանների պարունակությունը, գոտկատեղը՝ ինչպես հագուստի վրայից, այնպես էլ՝ տակից: Գտնում եմ, որ նշված գործողությունը կատարելուց հետո խնդրո առարկա շղթաները հայցվորի գրպանում, գոտկատեղում, կամ այլ վայրում չհայտնաբերելու դեպքում մաքսային մարմնի աշխատակիցների հատուկ ջանքերով թաքցված շղթաներն առանձին դժվարությամբ հայտնաբերելու դեպքում միայն խոսք կարող էր լինել Օրենսգրքի 201-րդ հոդվածում նկարագրված խախտման մասին:

Հարկ եմ համարում ընդգծել, որ 14.10.2022 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 438 որոշմամբ Վազգեն Աբրահամյանը պատասխանատվության է ենթարկվել ոչ թե հայտարարագրման ենթակա ապրանքներ իր մոտ ունենալու պարագայում «կանաչ ուղի» գիծն ընտրելու և այն հատելու համար, այլ՝ 2.369.626 ՀՀ դրամ մաքսային արժեքով 210 գրամ ընդհանուր քաշով ոսկյա զարդեր գրպանում և գոտկատեղում կախված կամ կապված վիճակում այսինքն՝ մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար:

Այսպիսով, գտնում եմ, որ 14.10.2022 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 438 որոշմամբ նկարագրված արարքը չի համապատասխանում Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտմանը, ուստի Վազգեն Աբրահամյանը

չէր կարող նշված հողվածի զանցառու ճանաչվել և նրա նկատմամբ չէր կարող կիրառվել նույն հողվածով նախատեսված վարչական պատասխանատվություն:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, անտեսելով Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայում ամրագրված արարքի նկարագիրը, արձանագրել է, որ առկա է Օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման փաստը և բացակայում են Կոմիտեի 14.10.2022 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 438 որոշման անվավերության հիմքերը:

Հայցվորին վերագրված արարքը Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիային համապատասխանեցնելու իր փորձը Վճռաբեկ դատարանը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

- «*հայցվորը հատել էր կանաչ ուղին և այդպիսի կոնկյուդենտ գործողությամբ հայտարարել է մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին ու մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտի հանդիսացող առարկաները գտնվել են հայցվորի տարածքի այնպիսի հատվածներում, որ չէին կարող սովորական տեսողական զննման միջոցով՝ առանց անձնական զննման, կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների օգտագործման հայտնաբերվել մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա է Օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման փաստը և բացակայում են Կոմիտեի 14.10.2022 թվականի թիվ 438 որոշման անվավերության հիմքերը»,*

- «*հայցվորը, իր մոտ ունենալով հայտարարագրման ենթակա ապրանքներ, դրանք անտեսանելի վայրում պահելով, հատել է «կանաչ ուղի» գիծը, որպիսի փաստն արդեն իսկ բավարար է՝ հաստատված համարելու, որ հայցվորը, ըստ էության, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող միջոցով փորձել է թաքցնել իր մոտ առկա հայտարարագրման ենթակա ապրանքները, այն է՝ մեկ թևնոց և երկու վզնոց՝ միացված իրար և դեղին մետաղական շղթաներ, ընդհանուր՝ 210 գրամ քաշով: Դա դրսևորվել է դրանք մաքսային մարմնի աշխատակիցներին ոչ տեսանելի վայրում՝ մասնավորապես տարածքի գրպանում պահելու և գտնվելուց կախված, առանց մաքսային մարմնի աշխատակիցներին դրա մասին տեղյակ պահելու՝ «կանաչ ուղին» ընտրելու և հատելու գործողություններով»:*

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ պատճառաբանությամբ փաստորեն փորձ է կատարվել հաստատված համարել Օրենսգրքի 201-րդ հոդվածով հայցվորին զանցառու ճանաչելու իրավաչափությունը՝ վերջինիս վերագրված արարքը դիտարկելով որպես նույն իրավանորմում նկարագրված արարք:

Ինչպես վերն արդեն նշել եմ, հայտարարագրման ենթակա ապրանքներ տեղափոխող անձի կողմից «կանաչ ուղին» ընտրելն ինքնին, որպես մաքսային իրավախախտում, նկարագրված չէ Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայում և անկախ այն հանգամանքից, թե մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելիս հայցվորն ինչու է ընտրել «կանաչ ուղին», վերջինս նշված հողվածով զանցառու չէր կարող ճանաչվել, քանի որ սույն գործով վիճարկվող որոշմամբ չի հաստատվել ապրանքը **գաղտնարանների օգտագործմամբ կամ ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով տեղափոխելու հանգամանքը, ինչն անտեսվել է Վճռաբեկ դատարանի կողմից:**

Վճռաբեկ դատարանի որոշման բովանդակությունից թերևս կարելի է ենթադրել, որ հայցվորին վերագրված իրավախախտումը համարվել է Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտում այն պատճառաբանությամբ, որ մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխվել են **ապրանքների հայտնաբերումը դժվարացնող եղանակով**: Ընդ որում՝ այդպիսի եղանակ է համարվել անձի տաբատի գրպանում դրված լինելը, ինչպես նաև գոտկատեղից կախված կամ կապված լինելը, որոնք ըստ Վճռաբեկ դատարանի գտնվել են անտեսանելի կամ ոչ տեսանելի վայրում: Ավելին, Վճռաբեկ դատարանը կարևորել է տաբատի կոնկրետ այն հատվածները, որտեղ գտնվել են ապրանքները՝ նշելով, որ դրանք գտնվել են **հայցվորի տաբատի այնպիսի հատվածներում**, որ չէին կարող սովորական տեսողական զննման միջոցով՝ առանց անձնական զննման, կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների օգտագործման հայտնաբերվել մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ եթե Վճռաբեկ դատարանը, օգտագործելով «**հայցվորի տաբատի այնպիսի հատվածներում**» արտահայտությունը, նկատի է ունեցել տաբատի գրպանը, ապա չեմ կարծում, որ տաբատի գրպանի որևէ հատված կարող է տեսանելի լինել առանց հատուկ միջամտության, ուստի առնվազն պարզ չէ, թե կոնկրետ ինչ հատված է նկատի ունեցել Վճռաբեկ դատարանը և ինչու այդ հատվածում հնարավոր չէր հայտնաբերել ենթադրաբար թաքցված ապրանքները և ինչ ջանքեր են անհրաժեշտ եղել դրանք հայտնաբերելու համար:

Երկրորդ՝ թեև ինձ համար մեծ «բացահայտում է», որ տաբատի գրպանն անտեսանելի կամ ոչ տեսանելի վայր է, այդուհանդերձ, գտնում եմ, որ նույնիսկ տաբատի «անտեսանելի» կամ «ոչ տեսանելի» գրպանում իրեր դնելը չի կարող համարվել **ապրանքների հայտնաբերումը դժվարացնող եղանակ**, քանի որ որևէ դժվարություն չի կարող ներկայացնել տաբատի գրպանում գտնվող իրերի հայտնաբերումը, եթե իհարկե տաբատի գրպանում երկտակ կտորով կամ այլ հատուկ միջոցներով առանձին հատված չի ձևավորվել, որն իրոք անտեսանելի է և առանց հատուկ միջոցների հնարավոր չէ հայտնաբերել դրա պարունակությունը: Հարկ եմ համարում նաև նշել, որ հագուստը, այդ թվում նաև տաբատը, որպես կանոն ունենում է գրպաններ, որոնցում սովորաբար դրվում են տարբեր իրեր և դրանք չեն կարող բոլոր դեպքերում համարվել թաքցված իրեր:

Ինչ վերաբերում է հայտարարագրման ենթակա ապրանքը հայցվորի գոտկատեղում կախված կամ կապված վիճակում տեղափոխելուն, ապա գործի փաստերից չի երևում, թե Վճռաբեկ դատարանն ինչից է ենթադրել, որ գոտկատեղից կախված կամ կապված ապրանքը սովորական տեսողական զննման միջոցով տեսանելի չի եղել:

Եզրահանգելով, որ հայտարարագրման ենթակա ապրանքը **հայցվորի տաբատի այնպիսի հատվածում դնելը**, որը չէր կարող հայտնաբերվել մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից սովորական տեսողական զննման միջոցով՝ առանց անձնական զննման, կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների օգտագործման՝ Վճռաբեկ դատարանը փորձել է հայցվորին վերագրվող արարքն ամեն կերպ համապատասխանեցնել Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիային: Սակայն այդ փորձն իմ համոզմամբ ձախողվել է: Ավելին՝ վստահ եմ, որ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման պարագայում նշված իրավանորմի հետագա կիրառման առումով առաջանալու են բազմաթիվ խնդիրներ:

Մասնավորապես. Վճռաբեկ դատարանը տաքատի գրպանը համարում է այնպիսի վայր, որտեղ գտնվող իրը դժվար է հայտնաբերել, քանի որ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից այն չի կարող հայտնաբերվել սովորական տեսողական զննման միջոցով՝ առանց անձնական զննման, կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների օգտագործման: Այլ կերպ ասած՝ ըստ Վճռաբեկ դատարանի, եթե սովորական տեսողական զննման միջոցով՝ առանց անձնական զննման, կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ տեսնել, թե ինչ է դրված տաքատի գրպանում, ապա դա նշանակում է, որ **ապրանքը տեղափոխվում է դրա հայտնաբերումը դժվարացնող եղանակով:**

Նման մեկնաբանումն ամբողջությամբ հաստատում է իմ այն դիրքորոշումը, որ անձը կարող է խուսափել Օրենսգրքի 201-րդ հոդվածի կիրառմամբ վարչական պատասխանատվությունից այն դեպքում, երբ «կանաչ ուղի» ընտրելու միջոցով տեղափոխվող հայտարարագրման ենթակա ապրանքը տեղադրած լինի տեսանելի վայրում (ոչ տաքատի գրպանում) և սովորական տեսողական զննման միջոցով՝ առանց անձնական զննման, կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր լինի տեսնել, թե ինչ է տեղափոխվում: Նկարագրված դեպքում չի կարող փաստարկվել, որ **ապրանքը տեղափոխվում է դրա հայտնաբերումը դժվարացնող եղանակով:**

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ Վճռաբեկ դատարանը Օրենսգրքի 201-րդ հոդվածում նկարագրված զանցակազմի հայտնաբերումը կապել է սովորական տեսողական զննման՝ առանց անձնական զննման կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների օգտագործման հետ՝ անտեսելով, որ սույն գործի փաստերի համաձայն՝ ոսկյա զարդերի մի մասը չեն գտնվել տաքատի «անտեսանելի» գրպանում, այլ կախված կամ կապված են եղել Վազգեն Աբրահամյանի գոտկատեղից, որի անտեսանելի լինելը չի հիմնավորվում ոչ միայն վիճարկվող որոշմամբ, այլ նաև՝ Վճռաբեկ դատարանի որոշմամբ:

Տեղափոխվող ապրանքի մի մասը Վազգեն Աբրահամյանի գոտկատեղից կախված կամ կապված լինելը՝ որպես ապրանքի հայտնաբերումը դժվարացնող եղանակ Վճռաբեկ դատարանի կողմից բացարձակապես քննարկման առարկա չի դարձվել, հավանաբար այն պատճառով, որ նշվածն անհնար է եղել հիմնավորել: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել, թե գոտկատեղից ինչ եղանակով են կախված կամ կապված եղել իրար միացված ոսկյա շղթաները, որոնք չէին կարող տեսանելի լինել սովորական տեսողական զննման միջոցով: Զորօրինակ, եթե այդ շղթաները կախված կամ կապված են եղել գոտկատեղից՝ որպես գոտի, ակսեսուար, հագուստի ատրիբուտ, ապա դժվար թե այն տեսանելի չլիներ: Նման պայմաններում, սակայն, Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարել վերջինիս նաև արարքի վերոգրյալ դրսևորման համար Օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում վերագրելը, որը չի բխում ոչ նշված իրավանորմի դիսպոզիցիայից, ոչ էլ անգամ Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներից:

Բացի այդ, հարկ եմ համարում հատուկ ընդգծել, որ Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայից ակնհայտ է, որ **մաքսային հսկողությունից թաքցնելով տեղափոխվող ապրանքի հայտնաբերումը ենթադրում է ոչ թե միայն սովորական տեսողական զննում՝ առանց անձնական զննման կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների**

օգտագործման, այլ նաև, և առավելապես անձնական զննում և/կամ մաքսային հսկողության տեխնիկական միջոցների օգտագործում: Հակառակ պարագայում ստացվում է, որ եթե զուտ տեսողական զննման միջոցով հնարավոր է հայտնաբերել գաղտնարանը, ապա խոսք չի կարող լինել **մաքսային հսկողությունից թաքցնելով ապրանք տեղափոխելու մասին**: Այլ կերպ ասած՝ Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայի նկարագրությունն ինքնին հիմնավորում է, որ մաքսային իրավախախտում է համարվում ոչ թե «կանաչ ուղի» ընտրելու միջոցով հայտարարագրման ենթակա և անձի տաբատի գրպանում, պայուսակում, մարմնի վրա գտնվող, գոտկատեղից կախված կամ կապված ապրանքի տեղափոխումը, որը հայտնաբերելու դժվարություն չի լինի, եթե այդ անձին առաջարկվի օրինակ՝ դատարկել գրպանները, բացել պայուսակը, ցույց տալ պարանոցից կախված կամ կապված զարդը, ձեռքի թևնոցները կամ մատներին դրված մատանիները, բացել գոտկատեղը, այլ՝ այն, որ տաբատի գրպանները դատարկելուց, պայուսակը բացելուց, պարանոցի, ձեռքի, մատների պարունակությունը և գոտկատեղը ցույց տալուց հետո մաքսային մարմնի աշխատակիցները որոշակի դժվարություններով հայտնաբերեն թաքցված ապրանքները: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման հիմքում մասնավորապես ընկած է այն տրամաբանությունը, որ հայտարարագրման ենթակա ապրանքի տեղափոխումը զուտ «կանաչ ուղիով» իրականացնելն ինքնին բավարար է տեղափոխումը մաքսային հսկողությունից թաքցնելու փաստը հաստատված համարելու համար: Նշված տրամաբանության հետ չեմ կարող համաձայնել, քանի որ մարդկանց գրպաններում գտվող, հագուստի վրա կախված կամ կապված և հեշտությամբ հայտնաբերվող ապրանքները որևէ կերպ չեն կարող համարվել թաքցված:

Նկատի ունենալով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանը պայմանավորել է Վերաքննիչ դատարանի կողմից ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 257-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ և 124-րդ հոդվածների խախտում թույլ տալու և ըստ այդմ՝ արդարադատության բուն էությունը խաթարելու հանգամանքով, հարկ եմ համարում նշել, որ Վերաքննիչ դատարանին ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 257-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ և 124-րդ հոդվածների խախտում վերագրելու որևէ հիմք առկա չէ, ինչի պատճառով էլ դեմ եմ քվեարկել սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցին:

Գտնում եմ, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված կանոնների պահպանմամբ, հետազոտելով և գնահատելով սույն վարչական գործով վիճարկվող որոշման կայացման համար հիմք հանդիսացած 14.08.2022 թվականի «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» թիվ ՄԿԽԴ-373 արձանագրությունը, 14.08.2022 թվականի «Անձնական մաքսային զննման» թիվ 164 ակտը, ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.10.2022 թվականի թիվ 14102204 եզրակացությունը, փաստել է, որ դրանցով որևէ կերպ չի հաստատվում այն, որ հայցվորը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով մաքսային հսկողությունից թաքցնելով, այն է՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով տեղափոխել է ապրանքներ: Ըստ այդմ՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ վարչական վարույթի նյութերով չի հաստատվում հայցվոր Վազգեն Աբրահամյանի կողմից Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված մաքսային կանոնների խախտման փաստը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, անտեսելով վերոգրյալ հիմնավորումները, վարչական արդարադատության պրակտիկայում թերևս առաջին անգամ դատական ակտով լրացնում է վարչական ակտի հիմնավորումները՝ որպես հայցվոր Վազգեն Աբրահամյանի կողմից Օրենսգրքի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված մաքսային կանոնների խախտման դրսևորում վարչական մարմնի փոխարեն արձանագրելով ապրանքի տեղափոխումը՝ դրա հայտնաբերումը դժվարացնող եղանակով, որպիսի հիմնավորում նշված չէ 14.10.2022 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 438 որոշման մեջ, ինչն իրավաչափորեն արձանագրել է Վերաքննիչ դատարանը և ինչը չի հերքել Վճռաբեկ դատարանը, սակայն ինքն է լրացրել այդ հիմնավորումը:

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Դատարանը, անվավեր ճանաչելով Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 14.10.2022 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 438 որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող, հիմնավորված ու պատճառաբանված դատական ակտեր, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Կոմիտեի վճռաբեկ բողոքով ներկայացված փաստարկները բավարար չեն Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և Վազգեն Աբրահամյանի հայցը մերժելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈՐՅԱՆ